

ԱՌԱՅԻՔ ՏՈՄԱՅԻ.

Տոմա, գաղղիացի քաջ իրաւագետը, մեռած է 1695 ին. անուանի են իւր առածները, զորս ծաղկաքաղ դնեմք :

Ա. Ինչպէս որ երկայնակեցութեամբ մարդուս մարմինը կծանրանայ ու կտկարանայ, այսպէս եւս մարդուս սիրտը գեշ սովորութեանց երկար տեսելովը կծանրանայ ու կտկարանայ :

Բ. Հարուստներուն աւելորդ ստացուածն աղքատաց հարկաւորին պէտք է ծառայէ. եւ ընդհակառակն, աղքատաց հարկաւորը հարուստներու աւելորդ ծախքին կծառայէ :

Գ. Դիպուածներուն գալնու չգալը մերձեռքը չեն, բայց մեր կամքը մեր ձեռքն է. կրնամք այնպէս պատրաստուիլ որ բնաւ դիպուած մը զմեզ չխռովէ ու մեր երջանկութիւնը չվերցընէ :

Դ. Մեզ ու մեր ընկերոջ դէպ եղած անիրաւութիւնները բոլորովին տարբեր կերպով կզգամք :

Ե. Հազար ու մեկ աւելորդ բաներն մեզ հարկաւոր կրնեմք. անով նեղութիւննիս կշատցընեմք, ժամանակնիս կկորսնցընեմք, եւ կեանքերնիս աւելի դժուար ու ձանձրանալի կընեմք :

Զ. Երջանիկ ըլլալու երեք բան հարկաւոր է, առողջ մարմին, ազատ միտք ու մաքուր սիրտ :

Է. Շարժուածքը հոգւոյն ճիգն է որով կուզեմարմնոյն մեջէն անցնելով դիմացինին հոգւոյն հետ հաղորդակցիլ, եւ իւր զգացածն ու տեսածը անոր եւս զգացընել ու երեւցընել :

Ը. Գովեստը որչափ եւ սուտ, ծաղրական, անհամ ու անհաստատալի ըլլայ՝ դարձեալ կսիրուի, վասն զի տուողին կողմէն հպատակութիւն՝ գերութիւն, եւ կամ բարեսիրութիւն մը կցուցընէ :

Թ. Քիչ մը գեղեցիկ օղ, բարեսէր խօսք մը, գովեստ, զգուանք, գորով մը զիս խոր տրտմութենէս կհանեն, յորմէ անկարելի եղեր էր ինքզինքս հանել խորհրդածութեամբ : Այս ինչ մեքենայ է հոգիս, որպիսի անդունդ աղետից ու տկարութեան :

Ժ. Ան աստիճան կուզեմք ուրիշի հաճոյանայ, որ մեր անձին անհաճոյ եղած ժամանակն եւս կուզեմք ուրիշի հաճոյանայ, եւ մինչեւ մեզի անհաճոյ եղողներուն եւս կուզեմք հաճոյանայ :

ԺԱ. Երբոր մարդս ճշմարտութեան մեջէ՛ք փորելն պէտք չէ վախնայ, վասն զի միշտ բաւ հիմ ու օգնութիւն կգտնէ : Բայց ընդունայն ու անստոյգ բաներու մեջ վտանգաւոր է խոր փորելը :

ԺԲ. Փոքր մխիթարութիւն չէ մարդուս այս աշխարհէս ելած ժամանակ մտածել որ կազատի այն

ամբոխէն որուն մեծագոյն մասը անմիտ ու չարասիրտ անձինք են :

ԺԳ. Մարդիկ իրենց նմանեաց գործոյն ու սրտին ընթացքն իրենց բաներէն կդատեն : Շատ ամգամ անոնց դէմ եղած բերել անքաղաքավարութիւն մը շատ աւելի պարսաւելի կերելի աջքերնուն քան քէ Աստուծոյ դէմ եղած մեծամեծ մեղքեր : Եւ ասոր օրինակն ամեն օր կտեսնեմք :

ԺԴ. Հիմա ջերմեռանդութիւնն ու առաքինութիւնը իրարմէ բոլորովին տարբեր բաներ դարձած են :

ԺԵ. Մարդս ինքզինքը երջանիկ ու գոհ ընելու համար երկու ճամբայ ունի. մէկը՝ բոլոր փափաքները կատարել, եւ միւսը՝ գանոնք չափաւորել : Առաջինը անկարելի է այս աշխարհիս մեջ. ուստի այն ճամբով ինքզինքը գոհ ընելու աշխատիլը մեծ անմտութիւն է :

ՇՈՒՆԵՐԸ ՎԱԽՅՆԵԼՈՒ ՀՆԱՐՔ.

Շատ անգամ յանկարծական կամ կարգէ դուրս շարժմունքով մը կրնայ մարդ կատաղի շուներ եւ ուրիշ վայրենի կենդանիներ վախցընել : Ունրքերը անունով անգղիացին կպատմէ քէ Հարաւային Ամերիկայի մեջ այսպիսի յանկարծական հնարքով մը վայրենի գոմէշներու զունդ մը փախուցեր է : Ուրիշ ճանապարհորդ մըն ալ կը պատմէ քէ նեղ կամուրջէ մը անցնելու ժամանակ անագին շուն մը կամուրջին մէկայ դիէն կատաղաբար վրան յարձակեր է, այնպէս որ փախչիլն անկարելի եղեր է : Մէկէն առանց շփոթելու կանկ առեր է, աջուրները տնկելով խտրոր մոլոր վրան նայեր է, յետոյ կծկեր ու ձեռուրները ծնկուրներուն վրայ դրեր, ու ոտուրներն ուժով գետինը զարկեր է : Այս որ տեսեր է շուներ ինքն ալ կանկ առեր է, կարծես քէ մարդուն հասակին յանկարծակի կարճենալուն վրայ ապշեր մնացեր է. եւ երբոր տեսեր է որ անիկայ անանկ երկուք եղած վրան կուգայ, ձգեր փախեր է : — Իտալիոյ դաշտի մը մեջէն գիշեր ատեն անցնելուս հովուի յաղքանդամ կատաղի շուն մը ընձ գիտեր ուր տեղէն յանկարծակի մեր վրայ յարձակեցաւ. անգէն ու անօգնական՝ ահաւոր վտանգը յուսահատ արիւթիւն մը ազդեց մեզի. ետ քաշուելու տեղ շիտակ վրան վազեցի, եւ բուռերս ամփոփած՝ ուժով մը դէպի բացած ահուկ բերանն երկնցուցի. սարսափեցաւ, դէպ ի ետ ետ գնաց, սոսկալի աղաղակ մը փրցուց ու ոլորտացեալ պոքը վար առնելով կծիկը դրաւ :